*ջաճանին և Հրմուզին և քեռն Ազապակի և կողակցին Ազիզին, և մեծ պապուն Կարապետի և մեծ մամուն Կիւլչիչէկին և հօրեղբարցն Պալիին եւ Պաղտասարին եւ որդւոյն Մուրատ-Պալիին եւ դստերն Մուլքիին և քեր որդւոյն Սաֆարին և զոքանչին մահտասի Մարիամին.. և ետ յիշատակ ի սբ. քաղաքն երուսաղէմ, ի դուռն սբ. Յակոբայ ի ձեռն տէր Գրիգոր Հայրապետին...»։ (Ձեռ. Ցուց. տետր Զ. էջ, 445-46)։*

*ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿՐՕՆԱԻՈՐ, Մբ. — 1659ին, Ս. Յակոբայ վանքին մէջ կ'ընդօրինակէ երեմիա վրդ.ի Աստուածաշունչի Բառգիրքը։*

*ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՄԵՐՏԻՆՅԻ.— 1624ին, Ս. Յակոբայ մէջ կ'ընդօրինակէ «ժամագիրք» մը Պարոնտէր պատրիարքի համար և կը գրէ հետևեալ յիշատակարանը «... Արդ գրեցաւ ժամագիրքս ձեռամբ անարհեստ գրչի Աստուածատուր Մերտինցւոյ, ի սբ. մայրաքաղաքս երուսաղէմ, ընդ հովանեաւ սբ. Յարութեան և սբ. Յակոբայ գլխադիր սբ. Աթոռոյն... ի չառաջնորդութեան ի հայր. տէր Գրիգոր արհեպիսկոպոսին, որ սատացաւ զայս գիրքս...։ Արդ գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՌՀԳ (=1624) ամին» (Ձեռ. Ցուց. Ի. էջ, 2328, ՄՋ. թ. 1833)։*

*ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Ա. ՊԵ.— 1313—1316։*

*ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Բ. ՊԵ. ՄԵՐՏԻՆՅԻ.— 1532—1542 Ըստ վաւերագրոց. Յովհաննէս եպս. որդի Դուկասու. հաւանաբար կթղ. Սսոյ. այդ միջոցներուն երուսաղէմի Ս. Յակոբ վանքին գործոց գլուխը կը գտնուի, 1532ին, պատրիարքական իշխանութիւնը դատարանի միջոցաւ կը յանձնէ Աստուածատուր եպս.ի որ բաւական ժամանակ պաշտօնավարելէ վերջ, իշխանութիւնը կը յանձնէ Փիլիպպոս եպս.ի. որուն մահուամբ դարձեալ կը վարէ իշխանութիւնը երկու տարուոյ չափ. և ծերութեան պատճառաւ յաջորդ կը կարգէ հղբօրորդին՝ Անդրէաս Պարոնտէրը, 1542ին։ (ԺՊե. բ., էջ 253—256)։ Աստուածատուր եպս. իր ինքնագիր յիշատակարանին համաձայն (ՄՋ. թ. 12) այլուր աբեղայ ձեռնադրուած և ապա երուսաղէմ գալով՝ ընտրուած է պարք.— «ես տէր Աստուածատուր Մերտինցի յայրեղա եկա ի սբ. Երուսաղէմ ի թվ. ՋՀԲ (=1523) մտայ ի Ս. Յակոբ ի սպասաւորութիւն»։*

*Աստուածատուր պարք. 1540ին, Պոլիս գացած է Ս. Յակոբի*